

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 45/9

10 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Ժակչին» ՍՊԸ 12.10.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ 30.09.2015 թ-ի թիվ 1968/10 որոշման դեմ:

#### **«Ժակչին» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ Ֆինանսների նախարարի 05.12.2014թ.-ի թիվ 5011195 հանձնարարագրի համաձայն «Ժակչին» ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ստուգում: Ստուգման արդյունքում կազմվել և «Ժակչին» ՍՊԸ-ին է ներկայացվել բյուջեի հետ փոխհարաբերությունների ստուգման թիվ 5011195 ակտը, որով արձանագրվել է 5.472.230 դրամի լրացուցիչ հարկային պարտավորություններ: «Ժակչին» ՍՊԸ-ն մասնակիորեն համաձայն չլինելով թիվ 5011195 ստուգման ակտով արձանագրված խախտումներին և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով, դիմել է ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով:

Գանգատարկման հանձնաժողովը կայացրել է հետևյալ որոշումը. «Միջնորդություն ներկայացնել ՀՀ Ֆինանսների նախարարին «Ժակչին» ՍՊԸ-ում բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգում կատարելու համար»:

ՀՀ Ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 1968/10 որոշման համաձայն գանձման ենթակա 15.035.487 դրամ չվճարված հարկային պարտավորությունների մեջ ներառվել է նաև թիվ 5011195 ստուգման ակտով արձանագրված 5.472.230 դրամ լրացուցիչ հարկային պարտավորությունները:

Ընկերությունը խնդրում է պարզաբանել, թե արդյո՞ք ՀՀ Ֆինանսների նախարարության իրավաբանական վարչությունն իրավունք ուներ թիվ 5011195 ակտով արձանագրված 5.472.230 դրամ լրացուցիչ հարկային պարտավորությունները ներառել թիվ 1968/10 գանձման որոշման մեջ, թե ոչ: Նման իրավասություն չունենալու պարագայում «Ժակչին» ՍՊԸ-ն խնդրում է վերոգրյալ ակտի գումարը նվազեցնել 30.09.2015 թ-ի թիվ 1968/10 գանձման որոշումից՝ մինչև վերստուգման նշանակման և իրականացման ավարտը:

#### **ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարը, քննարկելով «Ժակչին» ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 29.09.2015 թ-ի դրությամբ ընկերության

չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 15.035.487 դրամ: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ կողմից 30.09.2015 թ-ին ընդունվել է թիվ 1968/10 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Ժակչին» ՍՊԸ-ից 15.035.487 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ: Ընդ որում, Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունների կազմում ներառվել է նաև ՀՀ ՖՆ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 03.07.2015 թ-ի թիվ 5011195 ակտով առաջադրված պարտավորությունները՝ ընդհանուր գումարով 5.472.230 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ ֆինանսների նախարարի 05.12.2014 թ.-ի թիվ 5011195 հանձնարարագրի համաձայն «Ժակչին» ՍՊԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, որի արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 03.07.2015 թ-ի թիվ 5011195 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 5.472.230 դրամ: Ակտով շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությունների վերաբերյալ «Ժակչին» ՍՊԸ 14.07.2015 թ-ի գրությամբ բերվել է բողոք: Նշված բողոքի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից 31.07.2015 թ-ին կայացվել է թիվ 32/1 որոշումը, որով սահմանվել է միջնորդություն ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարին «Ժակչին» ՍՊԸ-ում բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգում կատարելու համար: Նման որոշում կայացնելու համար, ըստ էության, հիմք է հանդիսացել Ակտով առաջադրված պարտավորությունների հիմնավորված չլինելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Ակտով առաջադրված պարտավորությունների հիմնավորված լինելը, այսինքն՝ Ակտի իրավաչափության հարցը, որոշվելու է Հանձնաժողովի 31.07.2015 թ-ի թիվ 32/1 որոշման համաձայն իրականացվելիք բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգման արդյունքում, հետևապես, Ակտով առաջադրված պարտավորությունները չեն կարող ներառվել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ 30.09.2015 թ-ի թիվ 1968/10 որոշման մեջ և առաջադրվել գանձման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ 30.09.2015 թ-ի թիվ 1968/10 որոշումից նվազեցնել ՀՀ ՖՆ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 03.07.2015 թ-ի թիվ 5011195 ակտով առաջադրված պարտավորություններին վերաբերող մասը՝ ընդհանուր գումարով 5.609.903 դրամ:

Հանձնաժողովի նախագահ՝

  
Վ.ՄԻՐՈՍՅԱՆ